ԱՄՓՈՓ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

2010 թ. ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀՀ-ՈՒՄ ԹՄՐԱՄՈԼՈՒԹՅԱՆ ԵՎ ԹՄՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԱՊՕՐԻՆԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՏԱՐՎՈՂ ՊԱՅՔԱՐԻ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ

Թմրամիջոցների ապօրինի շրջանառությունը խոր արմատներ է գցել և դարձել մեծ ու փոքր պետությունների գերխնդիրներից մեկը: Այն ազդում է ոչ միայն երկրի սոցիալ-տնտեսական կառուցվածքի, այլև քաղաքական և միջազգային հարաբերությունների վրա: Այն դարձել է համընդհանուր խնդիր, որի դեմ պայքարելու համար անհրաժեշտ է երկրների իրավապահ մարմինների համակողմանի համագործակցությունը:

Համաշխարհային համագործակցության գնահատմամբ, աշխարհի երկրների անվտանգության հիմնական սպառնալիքը մնում է միջազգային ահաբեկչությունը, որի ֆինանսավորման հիմնական աղբյուրը միջազգային «սև շուկաներում» թմրամիջոցների իրացումից ստացվող գումարներն են:

Թմրամիջոցների ապօրինի շրջանառությամբ ձեռք բերված միջոցներով ստեղծվում են հանցավոր խմբեր, որոնք ազդում են երկրների ներքին ու արտաքին քաղաքականության վրա:

Չնայած համաշխարհային հանրության կողմից ձեռնարկվող միջոցառումներին՝ թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ տարվող պայքարի արդյունավետությունը մինչ օրս բարձր չէ:

Թմրամիջոցների ապօրինի շրջանառության հակազդումը՝ կապված տարբեր երկրների ակտիվ քաղաքական, տնտեսական, մշակութային ինտեգրացման հետ, մեկ երկրի, առավել ևս մեկ ծառայության շրջանակներում՝ հնարավոր չէ լուծել: Այն դարձել է համընդհանուր խնդիր, որի դեմ պայքարելու համար անհրաժեշտ է բոլոր երկրների և շահագրգիռ ծառայությունների համակողմանի համագործակցությունը:

* * *

Հայաստանի Հանրապետության ոստիկանության ԿՀԴՊ գլխավոր վարչությունը համագործակցելով ոստիկանության ստորաբաժանումների հետ 2010 թվականի ընթացքում թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառության դեմ տարվող պայքարի ուղղությամբ ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում հայտնաբերել է 1524 հանցագործությունների և 296 իրավախախտումների դեպքեր /2009 թվականին համապատասխանաբար՝ 1238 և 130/:



Գրաֆիկ . Թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառության հետ կապված հայտնաբերված հանցագործությունները և իրավախախտումները 2009-2010թթ.:

ՀՀ քր. օր-ի հոդվածներ		2009թ.	2010թ.
266, 268, 271		1229	1518
Այթ թվում	266, 1-ին, 2-րդ մասեր	375	514
	266, 3-րդ մաս	83	162
	266, 4-րդ մաս	81	115
	268	690	727
267		0	0
269		1	0
270		0	0
272		1	0
273		6	5
274		1	1
Ընդամենը		1238	1524

Աղյուսակ. Թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառության հետ կապված հայտնաբերված հանցագործություններն ըստ ՀՀ քր. օր.-ի հոդվածների:

2010 թ. հանրապետության իրավապահ մարմինների կողմից ձեռնարկված օպերատիվ-հետախուզական և քննչական միջոցառումների արդյունքում, ընդհանուր առմամբ, ապօրինի շրջանառությունից հայտնաբերվել և առգրավվել է 126 կգ 521 գր տարբեր տեսակի թմրամիջոց՝ 2009 թվականի 56 կգ 762 գր.-ի դիմաց:

Թմրամիջոցի տեսակը	2009թ. /գր/	2010թ. /գր/
Մարիխուանա	26960.5	59036
Հաշիշ	699.2	1041.6
Հաշիշի յուղ	1.95	0.715
Կակաչի ծղոտ	1001.2	12.86
Կոկաին	12.98	-
Ափիոն	26857.7	8856.45
Ացետիլացված ափիոն	81.12	54.5
Հերոին	79.08	6971.2
Բուպրենորֆին	5.45	9.38
Մորֆին	0.17	1.27
Մետադոն	12.6	45.1
Կոդեին	1050.5	24.81
Օմնոպոն	0.0412	0.02
Ամֆիտամին	-	21508.5
Մետամֆիտամին	-	28959.4
Ընդամենը՝	56762.5	126521.8

Աղյուսակ. Իրավապահ մարմինների կողմից հանրապետությունում ապօրինի շրջանառությունից հայտնաբերված և առգրավված թմրամիջոցների ցանկը:

Բացի վերոհիշյալ նյութերից, ապօրինի շրջանառությունից հայտնաբերվել և առգրավվել է նաև 76.4 գր հոգեմետ նյութ, 16.7 լիտր պրեկուրսոր, /2009 թվականին՝ 6.2 գր. հոգեմետ նյութ եւ 1198 հոգեմետ դեղահաբ, 2.8 լիտր պրեկուրսոր/:

2010 թ. ընթացքում թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառության ոլորտում հանցագործություններ կատարելու համար քրեական պատասխանատվության է ենթարկվել 854, իսկ 2009 թվականին՝ 780 անձ:

Նշված 854 անձանցից 21-ը՝ կանայք են, 2-ը՝ անչափահաս, 58-ը՝ այլ երկրների քաղաքացիներ: 2009 թվականին այս տվյալները համապատասխանաբար կազմել են՝ 25, 8 և 30:

ՀՀ քր. օր.-ի 266 հոդվածի հատկանիշներով քրեական պատասխանատվության է ենթարկվել 354 անձ, 2009 թվականին՝ 366:



Գրաֆիկ. Թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառության համար քրեական պատասխանատվության ենթարկված անձանց սոցիալական կազմը:

Հանրապետությունում 2010 թվականին առանց բժշկի թույլտվության թմրամիջոցներ գործածելու համար /«Վարչական իրավախախտումների մասին» ՀՀ օր.-ի 44.2 հոդված/ վարչական պատասխանատվության է ենթարկվել 295, իսկ 2009 թ.՝ 122 անձ: «Վարչական իրավախախտումների մասին» ՀՀ օր.-ի 110 պրիմ 2 հոդվածի հատկանիշներով վարչական պատասխանատվության է ենթարկվել 1, իսկ 2009 թվականին՝ 8 անձ:

Հաշվետու տարում ՀՀ իրավապահ մարմինների կողմից ՀՀ առողջապահության նախարարության «Հոգեբուժական բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի նարկոլոգիական կլինիկա և ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» փորձաքննության ներկայացված 1631 անձանցից հաշվառման են վերցվել 1153-ը /որից 17-ը՝ կանայք են, 32-ը՝ Իրանի Իսլամական եւ 1-ը՝ Իսպանիայի քաղաքացիներ/: Դրանցից 577-ի մոտ հայտնաբերվել է կանաբիսի /50.0 տոկոս/, 488-ի մոտ՝ ափիոնի /42.3 տոկոս/ և 88-ի մոտ՝ սինթետիկ /7.7 տոկոս/ խմբերին պատկանող թմրամիջոցի առկայություն /2009թ. համապատասխանաբար՝ 1994 անձանցից հաշվառման են վերցվել 1142-ը /որից 7-ը՝ կանայք են, 20-ը՝ ԻԻՀ քաղաքացի/: Դրանցից 590-ի մոտ հայտնաբերվել է կանաբիսի, 507-ի մոտ՝ ափիոնի և 45-ի մոտ՝ սինթետիկ խմբերին պատկանող թմրամիջոցի առկայություն/:



Գրաֆիկ. Առանց բժշկի նշանակման թմրամիջոցներ գործածած անձանց տարիքային կազմը

«Վարչական իրավախախտումների մասին» ՀՀ օր.-ի 179 պրիմ հոդվածի հատկանիշներով վարչական պատասխանատվության է ենթարկվել 149 մարմնավաճառ, որոնց տարիքային կազմը հետեւյալն է՝ մինչեւ 18 տարեկան՝ 0, 18-ից 25 տարեկան՝ 43, 25-ից 35 տարեկան՝ 59 և 35-ից բարձր՝ 47 անձ /2009 թ. վարչական պատասխանատվության է ենթարկվել 264 մարմնավաճառ/:



Գրաֆիկ. Վարչական պատասխանատվության և համապատասխան հաշվառման վերցված մարմնավաճառների տարիքային կազմը

2010 թ. հանրապետությունում իրավապահ մարմինների կողմից ՀՀ քր. օր.-ի 261, 262 հոդվածների հատկանիշներով բացահայտվել է 43 հանցագործության դեպք /2009 թ.՝ 48/, ՀՀ քր. օր.-ի 132, 132 պրիմ հոդվածների հատկանիշներով՝ 13 դեպք /2009 թ.՝ 11 դեպք/:

ՀՀ ոստիկանության 2010 թվականի հիմնական կազմակերպչական միջոցառումների պլանի և ոստիկանության պետի ցուցումի համաձայն 2010 թվականի օգոստոսի 23-ից մինչև սեպտեմբերի 15-ը ընկած ժամանակահատվածում հանրապետության տարածքում ՀՀ ոստիկանության կողմից կազմակերպվել եւ իրականացվել է «Կանեփ-կակաչ-2010» համալիր օպերատիվ-կանխարգելիչ միջոցառումը, որին մասնակցել են ոստիկանության, պաշտպանության նախարարության ստորաբաժանումների ծառայողները, տեղական ինքնակառավարման մարմինների և զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչները: Հիշյալ միջոցառման նպատակն էր հայտնաբերել և ոչնչացնել վայրի աճած և ապօրինի մշակած ու աճեցված կանեփի և կակաչի կանաչ զանգվածներ:



Գրաֆիկ. Հանրապետությունում իրականացված «Կանեփ-կակաչ» համալիր կանխարգելիչ միջոցառումների արդյունքում հայտնաբերված և ոչնչացված կանեփի և կակաչի կանաչ զանգվածների քանակական պատկերը՝ վերջին տասներեք տարիներին /քանակը՝ կգ/:

Ի կատարումն Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության անդամ պետությունների անվտանգության խորհրդի 2008 թ. սեպտեմբերյան որոշման, ՀԱՊԿ անդամ պետությունների շրջանակներում ստեղծված թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի իրավասու մարմինների ղեկավարների համակարգող խորհրդի 2010 թ. հիմնական միջոցառումների պլանի 2-րդ կետի և «Կանալ-2010» համալիր օպերատիվ-կանխարգելիչ միջոցառման անցկացման օրացուցային պլանի՝ 2010 թ. նոյեմբերի 16-ի ժամը 00-00-ից մինչև նոյեմբերի 22-ը ժամը 14-00-ն անց է կացվել «Կանալ-2010» համալիր օպերատիվ-կանխարգելիչ միջոցառումը: Միջոցառման նպատակն էր կանխել մաքսանենգ ճանապարհով աֆղանական ափիոնի ներթափանցումը դեպի եվրասիական տարածաշրջանի պետություններ, այդ թվում՝ Կասպից եւ Սեւ ծովերի ջրային տարածքներով, պրեկուրսորների ապօրինի ներթափանցումը Աֆղանստան, սինթետիկ թմրամիջոցների ներթափանցումը՝

Եվրոպայից, կոկաինը՝ Լատինական Ամերիկայից, ինչպես եւ՝ կանխել թմրամիջոցների ապօրինի շրջանառությունից ստացված եկամուտների օրինականացումն ու ապօրինի շրջանառությունից զենք-զինամթերքի ու պայթուցիկ նյութերի հայտնաբերումը:
Միջոցառման արդյունքում հայտնաբերվել էր թմրամիջոցների ապօրինի շրջանառության հետ կապված 9 հանցագործության դեպք /քրեական պատասխանատվության է ենթարկվել 9 անձ, որից՝ 1-ը օտարերկրացի/: Ապօրինի շրջանառությունից հայտնաբերվել և առգրավվել է ընդհանուր առմամբ 985 գր տարբեր տեսակի թմրամիջոց, որոնցից ափիոն՝ 3.3 5գր, հաշիշ՝ 1.7 գր, մետամֆիտամին՝ 980 գր, 34 հատ հոգեմետ դեղահաբ: Բացի վերոհիշյալը՝ բացահայտվել է տարբեր տեսակի 81 հանցագործության դեպք, առգրավվել է 9 հրազեն, 18 որսորդական հրացան, տարբեր տրամաչափի 3274 փամփուշտ, 11 պահունակ, 14 նռնակ, 1 ական, 1 ինքնաշեն նռնականետ, 400 գր պայթուցիկ նյութ՝ 2 էլեկտրական պայթուցիչով, 5 սառը զենք:

Հայտնաբերվել է հետախուզման մեջ գտնվող 26 անձ:

2010 թ. ընթացքում ՀՀ է ներմուծվել ընդհանուր առմամբ 306000 սրվակ թմրամիջոց, որոնք օգտագործվում են բուժհիմնարկներում: Մասնավորապես՝

-մորֆին 1 % 1 մլ - 80000 սրվակ

-օմնոպոն 2 % 1 մլ - 72000 սրվակ

-պրոմեդոլ 2 % 1 մլ - 14000 սրվակ

-ֆենտանիլ 0.005 % 1 մլ - 140000 սրվակ

Ներկայումս հաշվառման են գտնվում 164 օնկոլոգիական հիվանդ եւ 112 մետադոնային բուժում ստացող թմրամոլ:

Հանրապետությունում 2009 թ.-ից իրականացվող մետադոնային ծրագրի շրջանակներում ներմուծվել է նաեւ մետադոնի 288 շիշ՝ 5 մլգ N100 - /28800 հաբ/, 732 շիշ՝ 10 մլգ N100 /73200 հաբ/, 510 շիշ՝ 40 մլգ N100 /51000 հաբ/:

Երեւանում գործում է 76 դեղատուն /65 ֆիրմա/, որոնք վաճառում են հոգեմետ դեղամիջոցներ, 21 ֆիրմա ներմուծում է հոգեմետ դեղամիջոցներ, մեկ ֆիրմա արտադրում է 9 անվանում հոգեմետ դեղամիջոցներ: Թմրամիջոցներ ներմուծելու լիցենզիա ունի 4 ֆիրմա: 2010թ. ընթացքում ՀՀ է ներկրվել 5792542 կգ ծծմբական թթու՝ /Իրանից, Ֆրանսիայից և Ուկրաինայից/ թվով 9 ընկերության կողմից, 199351 կգ աղաթթու՝ /Իրանից, Լեհաստանից, ԱՄՆ-ից և Ուկրաինայից/ 4 ընկերության կողմից, 159406 կգ տոլուոլ՝ /Իրանից, Լեհաստանից եւ Ուկրաինայից/ 4 ընկերության կողմից, 1000 կգ պերմանգանատ կալիում՝ /Ուկրաինայից/ 1 ընկերության կողմից, 189600 կգ ացետոն՝ /Իրանից, Կորեայից, Դուբայից/ 5 ընկերության կողմից, 23.9 կգ մեթիլէթիլկետոն՝

/Իրանից, Ֆրանսիայից, Գերմանիայից/ 3 ընկերության կողմից, 100 կգ դիէթիլէֆիր՝ /Լեհաստանից/ 1 ընկերության կողմից իրենց արտադրական կարիքների համար:

Թմրամիջոցի տեսակը	Գինը
Ափիոն /1 գր/	*ԱՄՆ $ 50-80*
Կակաչի ծղոտ /1 գր/	*ԱՄՆ § 80*
Մարիխուանա /1 գր/	*ԱՄՆ $ 3-6*
Հաշիշ /1 գր/	*ԱՄՆ $ 30-40*
Մորֆի /1 %, 1 սրվակ/	*ԱՄՆ $ 10-12*
Հերոին /1 գր/	*ԱՄՆ $ 100-120*
Սուբուտեքս / 1 հաբ/	*ԱՄՆ $ 120-140*

Աղյուսակ. Թմրամիջոցների գները հանրապետության «սև» շուկայում